602

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

*Պատերազմից վնասուածներին օգնող*

## ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

**1915—1916 ուս. տ.**

Մ.Ա 602

ԹԻՖԼԻՍ
Տպարան Է Պ Օ Խ Ա Մուզ. պեր. № 8.
1916

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

*Պատերազմից վնասուածներին օգնող*

## ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ

## ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

**1915—1916 ուս. տ.**

Ա։Մ։ 2/290

ԹԻՖԼԻՍ
Տպարան Է Պ Օ Խ Ա Մուզ. պեր. № 8.
1916

1915 Թ. սեպտեմբերի 12-ին, Հայ Ուսուցչական Միութեան նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ Թիֆլիսի հայ ուսուցիչների ընդհանուր ժողովը, որը լսելով Հայ Ուսուցչական Կոմիտէի $19^{14}/^{15}$ ուս. տ. գործունէութեան տեղեկագիրը և ի նկատի ունենալով ներկայ բացառիկ դրութիւնը, որոշեց շարունակել նոյն գործը աւելի մեծ եռանդով ու ծաւալով, գլխաւոր ուշադրութիւնը դարձնելով փախստական երեխաների կրթական կարիքների հոգացողութեան վրայ։

Նոյն այդ ժողովը ընտրեց Կոմիտէի անդամ հետևեալ անձանց.

1. Աբովեան Սարգիս, 2. Աղաբաբ Յ.
3. Խանոյեան Սարգիս, 4. Հովուեան Պօղոս,
5. Ղազարեան Գէորգ, 6. Յարութիւնեան Իսահ.
7. Յովհաննիսեան Պետ. 8. Ստամբօլցեան Անուշ.
9. Տէր-Միրաքեան Յով.

Հէնց նոյն օրը, Կոմիտէն առաջին նիստը գումարելով և ընտրելով նախագահ պ. Իս. Յարութիւնեանցին, փոխ-նախագահներ պ. պ. Յ. Տէր-Միրաքեանին և Հովուեանին, գանձապահ՝ պ. Ս. Աբովեանին ու քարտուղար պ. Ան. Ստամբօլցեանին, անցաւ անմիջապէս գործի։

Նպատակայարմար համարեց Թիֆլիսում բաժանմունքներ բանալ կենտրոնական վայրերում, եղած դըպրոցներին կից։ Բացի այդ անհրաժեշտ համարեց յիշեալ դպրոցների դասատուութիւնը յանձնել բացառապէս գործազուրկ փախստական ուսուցիչներին, համարելով այդ

նպատակայարմար կրկնակի պատճառներով. Նախ որ նրանք աւելի մօտ են փախստական երեխաներին և երկրորդ, որ աւելի կարևոր է՝ հնարաւորութիւն տուած կը լինենք գէթ ոմանց սեփական աշխատանք ունենալու:

Յետագայում այս սկզբունքը Կոմիտէն անշեղ իրագործեց և այդ տեսակէտից առաջինն եղաւ, որ փախստականների գործի վարումը յանձնեց բացառապէս իրենց. ուսուցիչներ հրաւիրւում էին իրենց ընտրած մասնաժողովի յանձնարարութեամբ:

Կոմիտէն իր հիմնական նպատակը իրագործելու համար հետամուտ եղաւ հէնց սկզբից նիւթական միջոցներ գտնելու: Դիմումներ արւեց գաւառի ուսուցչական խմբերին, որ իրենց նպաստներով օժանդակեն այս գործին: Բայց բոլոր տեղերից էլ համարեա բացասական պատասխան ստացւեց, որովհետև ուսուցչական խմբերը անցեալ տարւայ նման իրենց նպաստները տալիս էին տեղական Կոմիտէներին. Մնաց միայն Գորւայ ուսուցչական խումբը, որ անցեալ տարւայ նման, պարբերաբար ուղարկում էր իր նպաստները: Այսպիսով մնացին գլխաւորապէս Թիֆլիսի հայոց միջնակարգ և ծխական դպրոցների ուսուցիչները, որոնք իրենց 2% վճարումները խոստացան տալ սեպտեմբերից սկսած: Բայց այդ փողով չէր կարելի մեծ գործ կատարել, ուստի և դիմում եղաւ Կենտրոնական Կոմիտէին նպաստի համար: Կենտր. Կոմիտէն ոչ միայն խոստացաւ նպաստ տալ դպրոցների համար, այլ և փախստական ուսուցիչներին ու ինտելիգենտներին նպաստ տալու գործը նա յանձնեց Ուսուցչական Կոմիտէին:

Այս խոշոր օժանդակութիւնը հնարաւորութիւն տւեց ընդլայնելու Կոմիտէի գործունէութեան սահմանները: Այնուհետև Կոմիտէի գործունէութիւնը ընթացաւ գլխաւորապէս երկու՝ նպաստաբաշխ և դպրոցական ուղղութեամբ:



Նպաստներ. Թիֆլիսէին հաւաքւել բազմաթիւ փախստական ուսուցիչներ-ինտելիգենտներ, որոնք անծանօթ պետական լեզւին ու շրջապատին, չէին կարողանում համապատասխան պաշտօն ճարել և գտնւում էին ծայրայեղ կարիքի մէջ: Մի կողմից պատւասիրութիւնը, միւս կողմից ցածր պաշտօնների սովոր չլինելը մի շատ դժւարին կացութիւն էր ստեղծել յիշեալ մտաւորականների համար: Կոմիտէն առաջին հերթին իրեն նպատակ դրեց օգնութեան հասնել դրանց, պաշտօններ գտնելով կամ նպաստներ տալով: Նրանց կարիքների ու ձեռնհասութեանը ծանօթանալու համար Կոմիտէի հրաւէրով, սեպտեմբերի 15-ին գումարւեց փախստական ուսուցիչների և ինտելիգենտների ժողով: Կոմիտէի առաջարկով այդ ժողովը ընտրեց 5 հոգի զանազան շրջաններից՝ Աղէքսանդր Մկրտչեանին, Սեդրակ Խալյեանին, Յով. Աւագեանին, Արամ. Մաղաքեանին և Հրանտ Գալիկեանին, որոնք ճանաչելով և մօտ լինելով նրանց, պէտք է աշակցէին Կոմիտէին պաշտօններ կամ նպաստներ տալիս: Այդ յանձնաժողովը ներկայացրեց բոլորի ցուցակը մանրամասն տեղեկութիւններով իւրաքանչիւրի մասին և առաջարկեց անմիջապէս նպաստ տալ 16 հոգու ամենակարիքաւորներին ի հաշիւ ապագայ ռոճիկի: Նպաստի քանակը որոշւեց մի մարդուն 10 ռուբլի, իսկ ընտանիք ունեցողներին համաձայն անդամների թւի: Այնուհետև նպաստի բաշխումը շարունակւեց մինչև տարւայ վերջը, միայն այն տարբերութեամբ, որ նպաստ ստացողների թիւը աստիճանաբար պակասեց: Շատերը պաշտօն գտան, տեղաւորւեցին զանազան տեղերում. Մնացին շատ սակաւաթիւ անհատներ, որոնց և Կոմիտէն պարբերաբար տալիս էր մի որոշ գումար ամենաանհրաժեշտ կարիքների համար:

Մինչև օրս նպաստ տրուած է 2464 ռ. 20 կոպ. անգործութեան կամ հիւանդութեան պատճառով։ Մի քանիսին էլ տրուած է ճանապարհածախս հայրենիք վերադառնալու համար։

Սկզբնական շրջանում կարիքաւորների ցուցակը ներկայացնում էր իրենցից ընտրուած յանձնաժողովը։ Տարւայ ընթացքում դրա կազմը փոխուեց. ընտրուեցին 3 հոգի Թիֆլիսում պաշտօնավարող փախստական ուսուցիչներից և 2 հոգի էլ աշխատանքի Բիւրոյից, որոնց Կոմիտէն դիմում էր տեղեկութիւնների համար։ Սակայն պէտք է ասել, որ Կոմիտէն առանձին դժւարութիւններ չէր յարուցանում իւրաքանչիւր խնդրատուի առաջ աւելորդ ձևականութիւններով. բոլոր դիմողներն էլ բաւարարութիւն են ստացել առանց որևէ մերժումի։ Կոմիտէն կատարեալ հաւատով էր վերաբերւում նրանց և պէտք է ասել, որ մեր հաւատը ի չարը գործ դրւելու ոչ մի դէպք չի եղել։

Սակայն Կոմիտէն չէր բաւականանում միայն նպաստներ բաշխելով. դա օգնութեան նպատակայարմար ձև չէր։ Աշխատում էր պաշտօններ գտնել, քանի որ բոլորն էլ աւելի շուտ պաշտօն էին խնդրում, քան նպաստ։ Պաշտօնների համար մի քանի անգամ դիմումն տրւեց Քաղաքների Միութեանն ու տրամվայների վարչութեանը, բայց ռուսերէն չիմանալը միշտ էլ արգելք էր հանդիսանում նման-հիմնարկութիւններում ծառայելու։ Կոմիտէն էլ բոլոր ուսուցական պաշտօնները յանձնեց բացառապէս փախստականներին ու այսպիսով կարողացաւ 40 հոգու պաշտօն գտնել թէ իր և թէ այլ ընկերութիւնների դպրոցներում և որբանոցներում։

Դպրոցներ փախստական երեխաների համար. Կենտր. Կոմիտէի դրամական օժանդակութիւնը հնարաւորութիւն տւեց ընդարձակելու մեր գործունէութիւնը։ Որոշւեց



դպրոցներ բանալ, բացի Թիֆլիսից, նաև այն գաւառներում, ուր կան փախստական երեխաներ։ Դիմումներ եղան զանազան տեղեր, խնդրելով տեղեկութիւններ փախստական երեխաների և ուսուցիչների մասին։

Նոր Բայազէտում, նախքան մեր գրութիւնը, բացել էին մի զուգընթաց 1 բ. (50 հ.) փախստական երեխաների համար, ձրիաբար բաժանելով դասերը իրենց ուսուցիչների միջև։ Բայց յետոյ, այդ բանը համարելով անյարմար և հիմնւելով Կոմիտէիս գրութեան վրայ, բացւած 1 բ. համար հրաւիրում են փախստական վարժուհի օր. Տիգրանուհի Տէր Ներսիսեանցին ամիսը 25 ռ. ռոճկով։ Կոմիտէն ընդունեց նրանց առաջարկը, միայն ուսուցչուհու ռոճիկը դարձրեց 30 ռ., պիտոյքների հոգացողութիւնն էլ իր վրայ վերցրեց։ Բացի այդ տեղեկանալով, որ դուրսը մնացած որբեր ու երեխաներ կան, դեկտեմբերի 1-ից Նոր-Բայազէտ ուղարկեց մի ուսուցիչ՝ Վանեցի Գալճեան Երւանդ, 30 ռ. ռոճկով։

Սկզբնական շրջանում ոչ միայն բոլոր փախստական դպրոցների, այլ և Թիֆլիսի ու մի քանի որբանոցների կրթական գործը Կենտր. Կոմիտէն մեզ էր յանձնել։ Այդ պատճառով էլ Կ-էն ուսուցիչներ հրաւիրեց նաև Սանահնի, Ծուբինեանի, հայ օրիորդների Կ-էի որբանոցների համար. բայց յետոյ Կենտ. Կոմիտէն իր վրայ վերցրեց որբանոցների և փախստականների դպրոցական գործը. Կոմիտէիս իրաւասութեան տակ մնացին Թիֆլիսինն ու գաւառի 8 դպրոցները՝ Ջալալ-Օղլի, Եկատերինովկա, Օձուն (Ուզունլար), Գիւլաքարակ, Դսեղ, Շնող, Բոլնիս-Խաչէն և Ապակու գործարան։

Այդ գիւղերում սովորող փախստական աշակերտների թիւը 533, (342 տղ. 191 աղջիկ) ուսուցիչներինը՝ 12։ Ուսուցիչները բոլորը տաճկահայեր էին (մեծ մասամբ Վանից), բացի մէկից, որ Օլթիի փախստականներից էր։ Պա-

րապմունքները տեղի են ունեցել ծխական կամ պետական դպրոցներում, գլխաւորապէս դասերից յետոյ։

Կոմիտէն յիշեալ դպրոցներին մատակարարել է դասական պիտոյքներ՝ դասագրքեր, տետրեր, մատիտներ, գրքեր և այլն. նաև հագուստ բոլոր երեխաների համար։ Կոմիտէիս խնդրանօք այդ դպրոցներն այցելել է Ներսիսեան դպրոցի վերակացու պ. Ար. Տ. Անդրէասեան և մանրամասն զեկուցում ներկայացրել դպրոցների ընդհանուր դրութեան մասին։ Պարապմունքները տարուել են ծխական դպրոցների ծրագրով, բացի ռուսերէնից։ Այդ բանը նկատել է նաև փախստականների գործով շրջող առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ պ. Սարեկով, որ այցելել է դպրոցները գաւառապետի հետ միասին։ Ռուսերէն չաւանդելը եղել է արդիւնք այն հանգամանքի, որ ուսուցիչները տաճկահայ լինելով, չգիտէին ռուսերէն, բացի մէկից, օր. Գրիգորեան Մ., որ աւանդել է ռուսերէն համապատասխան բաժանմունքում Ալպակու գործարանում։

Չնայած մի շարք աննպաստ հանգամանքների, ինչպէս օրինակ, դասական պիտոյքների բացակայութիւնը կամ ուշ ստացուելը, դասագրքերի անյարմարութիւնը, աշակերտների բացակայութիւնը շոր ու ոտնաման չունենալու պատճառով, ճաշերից յետոյ պարապմունքների աննպատակայարմարութիւնը, այնուամենայնիւ ուսուցիչները, ընդհանուր առմամբ, բարեխղճութեամբ կատարել են իրենց վրայ դրուած պարտականութիւնները։

*Թիֆլիսի փախստականական դպրոցը.* Հայ Ուսուցչական Կոմիտէի սկզբնական ու գլխաւոր գործը եղել է Թիֆլիսի փախստականական դպրոցը։ Կոմիտէն իր ընտրութիւնից անմիջապէս յետոյ զբաղուեց այդ դպրոցի կազմակերպման խնդրով։ Դպրոցական շէնքերից ամենայարմարն ու ընդարձակը համարելով Ներսիսեան, Յովնանեան



և Գայեանեան դպրոցները, դիմում արուեց յիշած դպրոցների վարչութիւններին դասարանների թոյլտուութիւն խնդրելով։ Դպրոցների հոգաբարձութիւնները ոչ միայն ընդառաջ եկան Կոմիտէիս դիմումին, այլ և նրանցից՝ Ներսիսեան Դպրոցի հոգաբարձութիւնը իր վրայ վերցրեց իր դպրոցում տեղաւորուած աշակերտների ուսման պիտոյքների ծախսը։

Այնուհետև համապատասխան յայտարարութիւններից յետոյ սկսուեց փախստական երեխաների ընդունելութիւնը։

Առաջին նուագ բացուեց 5 բաժանմունք՝ 2 I. և մի-մի II, III և IV, որոնց համար հրաւիրուեցին 7 դասատու։ Կոմիտէն տեսնելով տաճկահայ ինտելիգենցիայի սուար քանակը և նրանց անել կացութիւնն ու վիճակը, աշխատում էր հնար եղածին չափ շատ մարդու գործ տալ. ուստի դասերը բաշխւում էին այն ձևով ու քանակով, որ շատերը պաշտօն ունենան և ստացած ռոճիկն էլ մինիմալ չափով գոնէ բաւարարէ նրանց առօրեայ պէտքերին։

Դպրոցական պարապմունքները սկսուելուն հետ զուգընթացաբար շարունակւում էր աշակերտների ընդունելութիւնը։ Եւ երբ 30—40 հոգի հաւաքւում էր, բացւում էր նոր դասարան։ Այսպիսով Կոմիտէն տարուայ ընթացքում բաց է անում 5 առաջին բաժանմունք, 2 երկրորդ, և մի մի երրորդ ու չորրորդ բաժանմունք։ Այդ բաժանմունքներից 7-ը տեղաւորուած էին Ներսիսեան դպրոցում, 2-ը Յովնանեան. պարապմունքները տեղի ունէին դասերից յետոյ։ Այդ բաժանմունքներից 5-ը բացուեցին հոկտեմբերին, 1-ը նոյեմբերին, 2-ը փետրուարին և 1-ը մարտին։

Դասարանների բացման հետ հետզհետէ հրաւիրուեցին 3 վարժուհի և 13 ուսուցիչ Թիֆլիսի տաճկահայ ուսուցչութեան ընտրած յանձնաժողովի կամ նրանց ճանաչող վստահելի անձնաւորութիւնների յանձնարարութեամբ։

Թէև կենտր. Կոմիտէն որոշել էր 30 ռ. ամսական

վարձատրութիւն, այն էլ պարապած ամիսների համար, բայց Կոմիտէն Թիֆլիսի ուսուցիչների նկատմամբ ընդունեց սկզբում դասագնի սիստեմը, դասը հաշուելով 25 ռ., որ թէև նոյն վարձատրութիւնն էր գալիս, բայց հաշուած էր 12 ամսուայ վրայ։ Սակայն յետոյ, ուսուցիչների դիմումի համաձայն, տարեկան ռոճիկները բաժանուեցին 9 ամսուայ վրայ ու այդպիսով իւրաքանչիւր ուսուցչի ընկաւ ամսական ռոճիկ 38 ռ. 40 կոպ.։ Ի հարկէ դա շատ չնչին վարձատրութիւն էր, այն էլ ներկայ թանգութեան ժամանակ, բայց աւելին չէին թոյլատրում Կոմիտէի միջոցները։ Բայց յետոյ շնորհիւ Հայ Ուսուցչական Միութեան աջակցութեան, Կոմիտէն հնարաւորութիւն ունեցաւ ռոճիկներն աւելացնել մարտի 1-ից գաւառի ուսուցիչներին 30-ից 40 ռ., Թիֆլիսի՝ 38 ռ. 40 կ.—45 ռ.։ Սակայն կոմիտէն դրանով էլ չբաւականացաւ և դարձեալ Հայ Ուսուցչական Միութեան աջակցութեամբ ամառուայ ամիսներին տուեց իր խնամքին յանձնուած դպրոցի ուսուցիչներին ամսական 30-ական ռուբլի նպաստ։ Ճիշտ է, նա այդպիսի պարտաւորութիւն յանձն չէր առել ուսուցիչների նկատմամբ, բայց ի նկատի առնելով նրանց չնչին ռոճիկը տարուայ ընթացքում և ուսուցիչների աշխատանքի որևէ աղբիւրից զուրկ լինելը, անհրաժեշտ համարեց օգնութեան հասնելու, գոնէ մինիմալ չափով, մտքի այս չարքաշ աշխատաւորներին։

Պարապմունքները տարուել են ծխական դպրոցների ծրագրով։ Ռուսերէն աւանդել են Գ. Դ. բաժանմունքներում առանց վարձատրութեան օր. օր. Զէյթաղեան Հայկանդուխտ, Խորոզեան Փեփրոնէ և Պապոյեան Հռաչեայ։

Կոմիտէն դպրոցների վրայ հսկելու և իր ուսուցչական խմբի միջև անմիջական կապ ստեղծելու համար, ընտրում է պ. Ս. Խանոյեանին։ Իրօք դպրոցների հսկողութիւնը կատարում էին Ներսիսեան դպրոցում (7 բաժ.)



պ. Մամբրէ Մկրեան, Յովնանեան դպրոցում (2 բաժ.) պ. Արս. Արծրունի։

Ուսուցչական խումբը տարուայ ընթացքում ունեցել է մի ծնողական ժողով Յովնանեան դպրոցում ծնողների հոծ բազմութեան ներկայութեամբ։ Խօսել են պ. պ. Մկրեան, Երիցեան, Յ. Տ. Միրաքեան և Ս. Խանոյեան։

Աշակերտ-աշակերտուհիների համար կազմակերպուել է գրական երաժշտական հանդէս, ուր երգել է դպրոցի երկձայն խումբը ուսուցիչ պ. Ռ. Խաչատրեանի ղեկավարութեամբ։

Մանկավարժական ժողովներ եղել են թւով 13, նուիրուած գլխաւորապէս դպրոցի առօրեայ հարցերի քննութեան։ Աշակերտութեան թիւը 1915/16 ուս. տ. երկրորդ կէսին հասնում էր 500-ի, բայց տարուայ վերջը այդ թիւը պակասեց, որովհետև ռուսական յաջողութիւններից խրախուսուած ոմանք վերադարձան հայրենիք, ոմանց էլ դէպի գաւառ ուղարկեցին։ Տարուայ վերջը աշակերտութեան թիւն հասաւ 434-ի, որից տղայ 275 և 159 աղջիկ։ Սրանցից $35^{0}/_{0}$ Վանեցի են, $15^{0}/_{0}$ Սալմաստեցի, $10^{0}/_{0}$ Մշեցի, $5^{0}/_{0}$ ական Կարնեցի և Բուլանղցի և $30^{0}/_{0}$ այլ և այլ տեղերից։ Ըստ հպատակութեան $70^{0}/_{0}$ Տաճկաստանցիներ են, $20^{0}/_{0}$-ը Պարսկաստանցիներ և $10^{0}/_{0}$ Ռուսաստանցիներ։

Գալով դպրոցական պարապմունքների ընթացքին և աշակերտների յառաջադիմութեանը, չի կարելի աչքաթող անել մի շարք աննպաստ հանգամանքներ։ Ամենից առաջ դասարանները բացուեցին տարբեր ժամանակ և ուշ, որոնց կազմն էլ փոփոխութեան էր ենթարկւում նոր բաժանմունքներ բանալիս։ Դասարանները բազմամարդ էին և որ գլխաւորն է աշակերտութիւնը տարբեր վայրերից էր, տարբեր բարբառի, ընդունակութեան և պատրաստութեան տէր, որ չափազանց վնասում էր յառաջադիմութեան գործին։ Սակայն ամենագլխաւոր անյարմարութիւնն այն

էր, որ պարապմունքները տեղի էին ունենում ժամը 2-ին և այն էլ ճաշելուց անմիջապէս յետոյ։ Մեծամասնութիւնը գնում էր Գայիանեան դպրոց, ճաշում և ապա վերադառնում Ներսիսեան, Յովնանեան դպրոցները և մինչև ժ. 6—7 շարունակում պարապմունքները։ Սրա վրայ եթէ աւելացնենք ուսուցիչների ընկած տրամադրութիւնը, պատկերը լրացրած կլինենք։ Ահա այսպիսի հանգամանքներում գտնւող դպրոցը չէր կարող փայլուն յաջողութիւն ցոյց տալ։ Չնայած վերոյիշեալ աննպաստ պայմաններին, այնուամենայնիւ աշակերտների ցոյց տւած յառաջադիմութիւնը եղել է միանգամայն բաւարար թէ աշակերտների ուշիմութեան և թէ ուսուցիչների ընդհանուր առմամբ ցոյց տւած բարեխիղճ վերաբերմունքի շնորհիւ։

Ճաշ. Դպրոցի հետ միաժամանակ կոմիտէն հոգ տարաւ միջոցներ գտնելու աշակերտներին ճաշ տալու, որ շատ աւելի կարևոր անհրաժեշտութիւն էր քաղցած ու թուլակազմ երեխաների համար։ Կոմիտէն դիմումն արեց Կովկասեան կանանց ընկերութեան վարչութեան, որ սիրով իր վրայ վերցրեց այդ գործի կազմակերպութիւնը։ Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Խատիսեան խոստացել էր նիւթապէս աջակցել, բայց յետոյ Կենտրոնական կոմիտէն դրա ծախսն էլ իր վրայ վերցրեց, յատկացնելով այդ նպատակի համար ամսական 500 ռուբլի։ Հոկտեմբերի 21-ից Գայիանեան դպրոցի շէնքում բացւեց ճաշարանը 140 հոգու համար։ Որովհետև այդ թիւը շատ սահմանափակ էր կարիքի համեմատութեամբ. Կենտ. Կոմիտէն, մեր դիմումից յետոյ, 80 հոգու համար ևս նպաստ տւեց։ Այդպիսով Նոյեմբերի 23-ից ճաշ պատրաստւում էր 220 հոգու համար, բայց (սովորաբար) մշտապէս ճաշողների թիւը աւելի էր լինում։ Անշուշտ լաւ կը լինէր որ բոլորին ճաշ տրւէր, բայց միջոցների սղութիւնը ստիպեց Կոմիտէին ընտրելու ամենակարիքաւորներին։ Զատկին և Ծննդին



բոլոր երեխաներին տրւած է ընթրիք, իսկ Նոր Տարուն Կովկ. կանանց ընկ. վարչութիւնը բաժանեց բոլորին միրգ թաշկինակներով։ Ճաշը պատրաստւում էր խնամքով և բաւական սննդարար էր. շաբաթւայ մէջ 4 անգամ միս էր տրւում։ Անշուշտ կանոնաւոր սննդին պէտք է վերագրել, որ աշակերտների մէջ հիւանդութիւններ չտարածւեցին։ Պէտք է ասել, որ ճաշարանի խնդրում մեծ ջանք ու աշխատանք է թափել Կովկասեան կանանց ընկերութեան վարչութիւնը։ Այդ գործին մեծապէս նպաստեց և Գայիանեան դպրոցի հոգաբարձութիւնը, դնելով մեր տրամադրութեան տակ իրենց ճաշարանը և խոհանոցը իր բոլոր պարագաներով։

Հագուստ. Սննդից յետոյ Կոմիտէն իր հոգատարութեան առարկան դարձրեց հագուստի խնդիրը։ Չնայած ներկայիս սոսկալի թանգութեան, յաջողւեց հագուստի և ոտնամանների կարիքը հոգալ բաւարար չափով։ Ստորև բերւած թւերը կը պարզեն մեր ասածները։

| | | |
|---|---|---|
| Ձմեռւայ հագուստ-աշակերտուհիների համար | 82 | ձեռք |
| » » աշակերտների բլուզ | 88 | » |
| » » » անդրավարտիկ | 84 | » |
| Ամառւայ զգեստ. Աշակերտուհիների համար | 296 | ձեռք |
| աշակերտների » | 76 | » |
| » անդրավ. | 100 | » |
| Ծերմակեղէն աշակերտուհիների և աշակ. համար | 360 | » |
| գուլպաներ | 140 | զոյգ |
| չուստեր | 596 | » |

Աշակերտ-աշակերտուհիներից շատերը չուստ ստացել են երկրորդ, նոյնիսկ երրորդ անգամ։ Գուլպաների մի մասը գործել են իրենք ծնողները։

Գաւառի դպրոցների երեխաներին բաժանուած է.

Ապակու գործարանի. դպ. 81 շապ. 81 վար. 49 բլուզ 32 շրջազգ.
Եկատերինենֆելդի » 130 » 130 » 75 » 55 »
Բոլնիս-Խաչէնի » 41 » 41 » 24 » 5 »
Օձունի և Շնողի գրպ. 16 ար. չիթ 596 արշ. կտաւ 567 արշ. շալվ. 167 արշ. անդրավարտիկ
Ջալալ Օղլու գրպ. 35 ար. չիթ 519 արշ. կտաւ 426 արշ. շալվ. $149\frac{1}{2}$ արշ. անդրավարտիկ
Գիւլաքարակի գրպ. 9 արշ. չիթ 487 արշ. կտաւ 174 արշ. շալվ. $31\frac{1}{2}$ արշ. անդրավարտիկ
Գեառգառի գրպ. 10 ար. չիթ 650 ար. կտաւի տեղ չիթ շալվ $64\frac{3}{4}$ արշ. անդրավարտիկ

Բացի երեխաներից շորեղէն է տրուած մի քանի որբ երեխայի։

Ուսուցիչներից իւրաքանչիւրին տրուած է մի մի գիշերանոց 10—12 արշին։ Այս շորեղէնը Կոմիտէիս խընդրանօք անձամբ գնացել ու բաժանել է Ներս. դպրոցի վերակացու պ. Արամ Տէր Անդրիասեան։

Հագուստի գործում մեծ աջակցութիւն են ցոյց տըւել տ. տ. Ն. Աւետեան, Ն. Խանոյեան և Շ. Տ. Միրաքեան։

*Եկամուտներ.* Սոյն ուսումնական տարում Կոմիտէին նպաստել են ամենախոշոր չափով Հայկական Կենդր. Կոմիտէն, Հայ Ուսուցչական Միութիւնը և Թիֆլիսի հայ ուսուցչութիւնը իր պարբերական վճարումներով։

Բացի սրանից Կոմիտէն ստացել է հասարակութեան զանազան խաւերից ու անհատներից նուէրներ, որոնց ցուցակը բերւում է հաշիւների հետ միասին։

Չբաւականանալով սրանով Կոմիտէս աշխատել է եկամտի կողմնակի աղբիւրներ գտնել։ Կազմակերպեց Հայ Ուսուցչական Միութեան հետ ու նրա անունով մի երեկոյթ-ներկայացում, որ չնայած պատերազմական խոշոր տուրքին ու այլ բազմաթիւ անհրաժեշտ ծախսերի տուեց



450 ռ. զուտ արդիւնք։ Ներկայացմանը մեծապէս աջակցեցին տ. տ. Ն. Խանոյեան, Ե. Գիւզալեան, Ե. Մաղաքեան և Ն. Աւետեան։

*Կոմիտէի գործավարութիւնը.* Կոմիտէս իւր ամբողջը գործը վարել է իւր անդամների միջոցով, միայն որոշ անհրաժեշտ դէպքերում օգտուել է այս կամ այն անձի բարեհաճ մասնակցութիւնից։ Առանձնապէս յիշատակութեան արժանի է Կոմիտէիս անդամ պ. Ս. Խանոյեան, որ ամբողջ ուսումնական տարում ձրիաբար վարել է Թիֆլիսի փախստականական դպրոցների տեսչութիւնը։

Սոյն ուսումնական տարում Կոմիտէս ունեցել է 40 նիստ։ Այս նիստերին անդամները յաճախել են հետեւալ ձեւով.

1. Յարութիւնեան Իսահակ բացակայել է 2 անգ. հիւանդ. պատ.
2. Տէր Միրաքեան Յովհաննէս » 6 »
3. Հովուեան Պօղոս » 3 անգ. հիւ. պատճ.
4. Աբովեան Սարգիս » 5, 3-ը հիւ. պատճ.
5. Ստամբոլցեան Անուշաւան ոչ մի անգամ
6. Խանոյեան Սարգիս » 2 անգամ
7. Ղազարեան Գէորգ » 3 անգ.
8. Յովհաննիսեան Պետրոս » 9 անգ.
9. Աղաբաբ Յակոբ » 9 անգ.

Բացի այս ժողովներից կոմիտէս մի քանի անգամ ունեցել է խառն ժողով Հայ Ուսուցչական Միութեան կենտ. Վարչութեան հետ, խորհրդակցութեան նիւթ ունենալով գլխաւորապէս հայ ուսուցչական ընդհանուր անկախ կազմակերպութիւն ստեղծելու խնդիրը փախստականական դպրոցները աւելի կանոնաւոր հիմունքների վրայ դնելու համար։

### Թիֆլիզի դպրոցների ուսուցչական խմբերից ստացած նպաստները.

| | | |
|---|---|---|
| Ներսիսեան դպրոց (11 ամիս) . . . | 955 | 68 |
| Գայիանեան դպրոց (10 ամիս) . . . | 305 | 80 |
| Յովնանեան դպրոց (10 ամիս). . . . | 275 | 71 |
| Ջգրաշէնի դպրոց (9 ամիս) . . . . | 53 | 90 |
| Նորաշէնի դպրոց (9 ամիս) . . . . | 50 | 40 |
| Քամոյեան դպրոց (9 ամիս) . . . . | 39 | — |
| Էջմիածնեցոց և Ս. Մինասի դպրոցներ (6 ամիս) | 37 | 80 |
| Շամքորեցոց դպրոց (9 ամիս). . . . | 37 | 40 |
| Կուկիոյ դպրոց (8 ամիս) . . . . | 34 | 40 |
| Ս. Գէորգի և Ս. Սարգսի դպրոցներ (5 ամիս) . | 30 | — |
| Թանդոյեան դպրոց (4 ամիս). . . . | 24 | — |
| Ս. Կարապետի դպրոց (7 ամիս) . . . . | 10 | 82 |
| Գումար. . . | 1854 | 91 |

### Հայ Ուսուցչական Կոմիտէի բացած գաղթականական դպրոցները.

| № № | Տեղերը | Աշակերտութեան թիւը | | | Բաժանմունքներ | | | | Ե՞րբ է սկսել ուսումը | Ո՞ր տեղի գաղթականներ են |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդհան. | տղայ | աղջիկ | I | II | III | IV | | |
| 1 | Ջալալ-օղլի | 120 | 75 | 45 | 2 բժ. 100 աշ | — | 20 աշ | — | Հոկտ. 25 | Բասենի — |
| 2 | Եկատերինովկա | 126 | 71 | 55 | 2 բժ. 102 աշ. | միացեալ 14 10 | | — | Դեկտ. 20 | Արդահան Օլթիի |
| 3 | Օձուն (Ուզունլար) | 50 | 37 | 13 | I | — | — | — | Նոյեմբ. 5 | Բասենի |
| 4 | Գիւլաքարակ | 35 | 25 | 10 | I | — | — | — | Հոկտ. 25 | » |
| 5 | Դսեղ | 50 | 30 | 20 | I | — | — | — | Նոյեմբ. 20 | » |
| 6 | Շնող | 50 | 42 | 8 | I | — | — | — | Դեկտ. 1 | » |
| 7 | Բոլնիս խաչէն | 40 | 24 | 16 | I | — | — | — | Նոյեմբ. 15 | » |
| 8 | Ապակու Գործարան | 62 | 38 | 24 | միացեալ 53 9 | | — | — | Յունուարի. 8 | Արդահանի — Օլթիի |
| 9 | Թիֆլիս | 533 | 342 | 191 | 12 դասարան — 10 ուսուցիչ 2 ուսուցչուհի | | | | | |
| | | 59 | 31 | 28 | I | | | | Հոկտ. 5 | Վանեցի 135<br>Սալմաստցի 89<br>Կրանեցի 28<br>Մշեցի 41<br>Բուլանղցի 26<br>Կոփեցի 25<br>Բիթլիսցի 10<br>Տաճկաստանի 16 վայրերից-45<br>Ռուսաստանցի<br>Ղարս 7<br>Սարիղամիշ 7<br>Օլթի 6<br>Արդւին 4<br>Արդահան 4<br>Ալեքսանդրա. 3<br>Բաթում 2<br>Թիֆլիս 2 |
| | » | 36 | 25 | 11 | I | | | | » » | |
| | » | 40 | 24 | 16 | I | | | | Նոյմբեր 1 | |
| | » | 34 | 21 | 13 | I | | | | Փետր. 1 | |
| | » | 70 | 36 | 34 | I | | | | Մարտի — | |
| | » | 51 | 30 | 21 | II | | | | Հոկտ. 5 | |
| | » | 36 | 27 | 9 | II | | | | Փետրուար 1 | |
| | » | 62 | 33 | 29 | III | | | | Հոկտ. 5 | |
| | » | 46 | 38 | 8 | IV | | | | Հոկտ. 5 | |
| | Ընդամէնը. | 434 | 275 | 159 | 16 դասատու 3 վարժուհի 13 ուսուցիչ | | | | | |
| | | 533 | 342 | 191 | 12 » 2 » 10 » | | | | | |
| | | 967 | 617 | 350 | 28 դասատու 5 վարժ. 23 ուսուցիչ. | | | | | |

## Հ. Ռև. Կոմիտէի դպրոցներում պաշտօնավարող ուսուց.-ուսուցչուհիները

| №№ | Ազգանուն-անուն | Կրթական ցենզը | Փորձը | Ո՞րտեղ է պաշտօնով | Ռոճիկը | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մինչև մար. | մարտի 1-ից |
| 1 | Արծրունի Արսէն | Վանի Երամեան դպր. և Բէյրութի ֆր. կոլլէջ | 6 | Թիֆլիս | 38 ռ. | 45 ռ. |
| 2 | Բոստանեան Միհրդատ | Վանի Երամեան դպրոց | 2 | » | 30 | 45 |
| 3 | Գալստեան Նշան | Վանի ամերիկ. միջն. վար. | 3 | » | | 45 |
| 4 | Երիցեան Կիրակոս | Կարնոյ «Նոր Սանասարեան» | 2 | » | | 45 |
| 5 | Զարգարեան Հրաչ | Սովորել է Պոլսի կենտր. վարժ. | 1 | » | 30 | 45 |
| 6 | Ժամկոչեան Սպիրիդոն | Վանի ամերիկ. միջն վարժ. և Մարզուանի Անատոլեան կոլլէջը | 15 | » | | 45 |
| 7 | Օր. Խրիմեան Սերփնէ | Ցովնանեան դպրոց VII-դ և պրօգիմնազիա | 3 | » | 38 | 45 |
| 8 | Խաչատրեան Ռուբէն | Սանասարեան դպրոց | 2 | » | | 45 |
| 9 | Մկրեան Մամբրէ | Վանի Երամեան վարժ. | 30 | » | | 45 |
| 10 | Մկրտչեան Աղէքսանդր | Ներսիսեան դպրոց | | » | | 45 |
| 11 | օր. Մկրտչեան Սիրանոյշ | Կարնոյ Հռիփսիմեան դպրոց. ու վարժուհանոցը | 3 | » | | 45 |
| 12 | Սահակեան Նզիա | Մարզուանի կոլլէջ և Սեբաստիոյ բարձր. դպրոց | 5 | » | 30 | 45 |
| 13 | Սարգսեան Գաբրիէլ | Կարնոյ «Նոր Սանասար.» | 3 | » | | 45 |
| 14 | օր. Սրւանձտեան Փեփրոնէ | Պոլսոյ վարժուհանոցը | 1 | » | 30 | 45 |
| 15 | Տէր-Ցարութիւն. Ղուկաս | Վանի Ամեր. վարժարանը | 13 | » | | 45 |
| 16 | Փողահարեան Հմայեակ | Վանի Ամեր. վարժար. և Պետ. ուսուցչանոցը | 7 | » | 30 | 45 |
| 17 | Արծրունի Երւանդ | Վանի Երամեան վարժ. և ֆր. դպրոց | 6 | Ջալալ-օղլի | 30 | 40 |
| 18 | Տիկ. Արծրունի | Վանի Սանդուխտեան վարժ. | 1 | » » | 20 | 30 |
| 19 | Գալստեան Մարկոս | Վանի Հայկազեան և պետ. դպրոցները | 3 | » » | 30 | 40 |
| 20 | Դաւթեան Մարտիրոս | Վանի կենտ. վարժարանը | 3 | Եկատերինովկա | 30 | 40 |
| 21 | Քիւրքչեան Գէորգ | Ամերիկեան դպրոց | 10 | » | 30 | 40 |
| 22 | Գէորգեան Խաչատուր | Վանի Երամեան վարժ. | 10 | Օձուն (Ուզունլ.) | 30 | 40 |
| 23 | Շալճեան Մաղաքիա | Վանի կենտ. վարժարանը | 9 | Գիւլաքարաք | 30 | 40 |
| 24 | Զրաբաշեան Ռուբէն | Վանի Ամերիկ. վարժ. և Երևանի Թեմ. դպրոց. | 6 | Դսեղ | 30 | 40 |
| 25 | Կաղանչեան Արամ | Վանի Հայկազ. կենտ. դպր | 3 | Շնող | 30 | 40 |
| 26 | Գալաստեան Փիրայր | Սովորել է Պոլսի կենտ. վարժ. | | Բոլնիսխաչէն | 30 | 40 |
| 27 | Արթինեան Ներսէս | № 1672 վկայագիր II կարգի ուսուցչէ | 2 | Ապակու գործ. | 30 | 40 |
| 28 | օր. Գրիգորեան Սիրանոյշ | Օլթիի քաղ. դպրոցի II դասարանը | 1 | » » | 20 | 30 |

# ՀԱՇԻՒ

## ՄՈՒՏՔ — *Հայ Ուսուցչական Կոմիտէի* 1915—1916 *ուս. տարւայ* — ԵԼՔ

### ՄՈՒՏՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մնացորդ առ 13-ն սեպտեմբերի 1915 թ. | | | 563 | 24 |
| Ստացուած է 1915—1916 թ. ընթացքում՝ | | | | |
| 1. Հայկական կենտրոնական կոմիտէից՝ | | | | |
| ա) անպաշտօն ուսուցիչներին նպաստ տալու . . . . 2300 ռ. | | | | |
| բ) ուսուցիչների ռոճիկների . . 7800 ռ. | | | | |
| գ) դպրոցական պիտոյքների . 1500 ռ. | | | | |
| դ) աշակերտների հագուստի . . 2600 ռ. | 14.200 | — | | |
| 2. Ուսուցչական միութիւնից . . . . | 1.600 | — | | |
| 3. Թիֆլիզի դպրոցների ուսուցչ. խմբերից. . | | | | |
| ա) 1914—15 թ. ապառիկ . . 50—60 | | | | |
| բ) 1915—16 թ, հաշւին . . 1854—91 | 1.905 | 51 | | |
| 4, Գորու ծխական դպրոցի ուսուցիչներից. . | 23 | 67 | | |
| 5. Ներսիսեան դպրոցի Հոգաբարձութիւնից. . | 488 | 99 | | |
| 6. Գորու «Գրասէրների Ընկերութիւնից . . | 4 | — | | |
| 7. » կանանց շրջանում հանգանակած. . | 40 | — | | |
| 8. Ջխար գիւղում հանգանակած . . . | 35 | 07 | | |
| 9. Սաչխերի հայ կանանց շրջանում հանգանակած | 31 | 45 | | |
| 10. Մի խումբ վրացի բանուորներից «Պայքար» թերթի միջոցով . . . . . . | 38 | 10 | | |
| 11. Ադելխանեանի գործարանի մի խումբ բանուորներից , . . . . . | 5 | | | |
| 12. Գայիանեան դպրոցի V դասարանից . . | 10 | — | | |
| 13. Թիֆլիզի III արակ. Գիմնազիայի VIII դասար. | 50 | — | | |
| 14. Շամքորեցոց դպրոցի Գ. պատր. դասարանից | 4 | 20 | | |
| 15. Տ. Ն. Ցիցիկեանից ի յիշատակ իր դուստր Սնելի . . . . . . | 50 | — | | |
| 16. Տ. Գ. և պ. պ. Հ. և Ա. Օհանջանեաններից ի յիշատակ օր. Սաթենիկ Օհանջանեանի . | 100 | — | | |
| 17. Պ. Զ. Ղազարեանից ի յիշատակ օր. Աշխէն Արովեանի . . . . . . | 15 | — | | |
| 18. «Մեղու» Ընկ. վարչութիւնից ի յիշատակ օր. Սաթենիկ Օհանջանեանի . . . | 40 | — | | |
| 19. Բժ. Լ. Օհանջանեանից . . . . | 10 | — | | |
| 20. Պ. Բագր. Միրիմանեանից . . . | 20 | — | | |
| 21. Պ. Աղ. Պապովեանից . . . . | 10 | — | | |
| 22. Պ. Յ. Ազարաքի տանը հանգանակած . . | 28 | — | | |
| 23. Պ. Գագիկ Պիճիկեանից . . . . | 5 | — | | |
| 24. Տ. Հռիփսիմէ Էփրիկեանից . . . | 5 | — | | |
| 25. Ինժ. Տէր-Օհանեանի որդիներ Սուրէնից և Սերժիկից . . . . . | 5 | — | | |
| 26. Ներկայացումից . . . . . | 911 | 32 | 19635 | 31 |
| Գումար . . . . | | | 20198 | 55 |

### ԵԼՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. Ռոճիկներ՝ Թիֆլիզի դպրոցների ուսուցիչներին . . . 6171. 40 | | | | |
| Գաւառի դպրոցների ուսուցիչներին 3860. — | | | | |
| Ծուրինեան որբանոցի ուսուցիչներին 90. — | 10121 | 40 | | |
| 2. Նպաստներ պաշտօն չունեցող ուսուցիչներին | 2464 | 20 | | |
| 3. Դպրոցական պիտոյք՝ Թիֆլիզի դպրոցներին . | | | | |
| » » գաւառի դպրոցներին . | 1888 | 45 | | |
| 4. Հագուստ՝ Թիֆլիզի դպրոցների աշակերտների համար . 2837. 20 | | | | |
| Հագուստ՝ գաւառի դպրոցների աշակերտների համար . . . 363. 90 | 3201 | 10 | | |
| 5. Վարձ ծառաներին . . . . . | 231 | 50 | | |
| 6. Ներկայացման կազմակերպութեան ծախք . | 464 | 80 | | |
| 7. Դիւանական և մանր ծախք . . . | 207 | 46 | 18578 | 91 |
| Մնացորդ առ 1-ն սեպտեմբերի 1916 թ | — | - | 1619 | 64 |
| Գումար . . . . | | | 20198 | 55 |

ป. น.
21290